ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

19 հունիսի 2020 թվականի գյուղ Տեղ

Մասնակցում էին Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 8 անդամներից՝

Արտակ Աղաջանյանը
Սևադա Դանիելյանը
Մասիս Մկրտչյանը
Համեստ Հակոբյանը
Արգամ Լալայանը
Նարինե Ջհանգիրյանը
Սենիկ Փարսյանը

Բացակայում էին Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու անդամ՝

Սիլվա Գալստյանը

Մասնակցում էր Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունցը:

Հրավիրված էին՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ, բնակավայրերի վարչական ղեկավարներ, համայնքի բնակիչներ:

Նիստը վարում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունցը:

Նիստի արձանագրումն ապահովում էր Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Արտակ Բաղդագյուլյանը:

Նիստն սկսվեց ժամը 14.00-ին:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի **ավագանին.**

1. **Լսեց Նիստի օրակարգի մասին:** Նիստը վարող Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունցը ներկայացրեց նիստի օրակարգի նախագիծը և առաջարկեց հաստատել այն: Այլ առաջարկություններ չեղան:

Որոշեց (N 12)՝

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 16-րդ հոդվածներով, համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարի առաջարկության, որոշման նախագծի կողմ-7, դեմ-0,

ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանին **որոշում է.**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2020 թվականի հունիսի 19-ի նիստի հետևյալ օրակարգը.

1. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու մասին:**
2. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքերն օտարելու մասին:**
3. **<<Քաղաքացու բյուջե>> ենթադրամաշնորհի մրցույթի հայտադիմումների գնահատման արդյունքները հաստատելու և համայնքային ներդրման չափ սահմանելու մասին**

(որոշման նախագծի քվեարկության արդյունքները. կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0)

2, Լսեց՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու մասին:
(զեկուցող՝ Համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունց)

Որոշեց (N13)՝

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ և 3-րդ մասով ու 67-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի կողմ-6, դեմ-0, ձեռնպահ-1 քվեարկության արդյունքներով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Տալ համաձայնություն աճուրդ-վաճառքի ձևով օտարելու Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող հետևյալ հողամասերը.
   1) ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի <<Տեղ գյուղ, 24-րդ փողոց, թիվ 10/1>> հասցեի /նպատակային նշանակությունը՝<<բնակավայրերի>>, գործառնական նշանակությունը՝ <<բնակելի կառուցապատման>>/, 497,8ք.մ. հողամասը (վկայական 12052020-09-0029, ծածկագիր՝ 09-101-0043-0008)՝ 210000 (երկու հարյուր տասը հազար) ՀՀ դրամ մեկնարկային գնով՝ օժանդակ շինություն կառուցելու նպատակով,
   2) ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի <<Տեղ գյուղ, Արցախյան խճուղի թիվ 2/2>> հասցեի /նպատակային նշանակությունը՝ <<արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության>>, գործառնական նշանակությունը՝ <<արդյունաբերական օբյեկտների>>/, 700,0ք.մ. հողամասը (վկայական 12052020-09-0030, ծածկագիր՝ 09-101-0124-0052)՝ 280000 (երկու հարյուր ութանասուն հազար) ՀՀ դրամ մեկնարկային գնով՝ արտադրական գործունեության օբյեկտ կառուցելու նպատակով:
   3) ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի <<Կորնիձոր գյուղ, Գոմատեղերի թաղամաս թիվ 3/4>> հասցեի /նպատակային նշանակությունը՝ <<արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության>>, գործառնական նշանակությունը՝ <<գյուղատնտեսական արտադրական օբյեկտների>>/, 512,0 ք.մ. հողամասը (վկայական 12052020-09-0028, ծածկագիր՝ 09-052-0113-0058)՝ 200000

(երկու հարյուր հազար) ՀՀ դրամ մեկնարկային գնով՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտ կառուցելու նպատակով:

2. ՀՀ Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

(որոշման նախագծի քվեարկության արդյունքները. կողմ՝ 6. դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1)

Ձեռնպահ է քվեարկել ավագանու անդամ Արգամ Լալայանը

3, Լսեց՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքերն օտարելու մասին:

(զեկուցող՝ Համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունց)

Որոշեց (N14)՝

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի կողմ-7, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող, Քարաշեն գյուղի 11-րդ փողոց թիվ 7հասցեում գտնվող /կադաստրային ծածկագիր 09-111-0115-0021/ 0,1989հա /նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների/ հողամասը և նրա վրա ամրակայված 204,3 քմ անասնաշենքը օտարել հրապարակային սակարկությունների միջոցով՝ մեկնարկային գին սահմանելով 924000/ինը հարյուր քսանչորս հազար/ ՀՀ դրամ, որից՝ հողատարածքի համար՝ 617000 դրամ, անասնաշենքի համար՝ 307000 դրամ, (ըստ «ԱՐԱՔՍՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-ի կողմից 2020թվականի մայիսի 26-ին տրված շուկայական գնահատման ԱԳԳ N 20/25 հաշվետվության):
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող, Տեղ գյուղի Արցախի խճուղի թիվ 29 հասցեում գտնվող /կադաստրային ծածկագիր 09-101-0001-0001/ 0,75567հա /նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների/ հողամասը և նրա վրա ամրակայված 693,3 քմ շենք-շինությունները /պահեստ՝ 138,3 քմ, պահեստ՝ 207,0 քմ, անասնաշենք՝ 293,9 քմ, անասնաշենք՝ 43,4 քմ, սանհանգույց՝ 10,7 քմ/ օտարել հրապարակային սակարկությունների միջոցով՝ մեկնարկային գին սահմանելով 5370000/հինգ միլիոն երեք հարյուր յոթանասուն հազար/ ՀՀ դրամ, որից՝ հողատարածքի համար՝ 4155000 դրամ, շենք-շինությունների համար՝ 1215000 դրամ, (ըստ «ԱՐԱՔՍՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-իկողմից 2020թվականի մայիսի 26-ին տրված շուկայական գնահատման ԱԳԳ N 20/26 հաշվետվության):
3. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել աճուրդը:

(որոշման նախագծի քվեարկության արդյունքները. կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0)

4, Լսեց՝ <<Քաղաքացու բյուջե>> ենթադրամաշնորհի մրցույթի հայտադիմումների գնահատման արդյունքները հաստատելու և համայնքային ներդրման չափ սահմանելու մասին

(զեկուցող՝ Համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունց)

Որոշեց (N15)՝

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 6-րդ և 42-րդ կետերի պահանջներով, համաձայն Տեղի համայնքապետարանի և «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ միջև կնքված համաձայնագրի 2-րդ հոդվածի 2-րդ կետի, որոշման նախագծի կողմ-7, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել «Քաղաքացիների ձայնն ու գործունեությունը Հայաստանի խոշորացված համայնքներում» ծրագրի «Քաղաքացու բյուջե» ենթադրամաշնորհի մրցույթի հայտադիմումների գնահատման արդյունքները և հաղթող նախագիծ հայտարարել <<ՀամաՏԵՂ>> երիտասարդական խորհրդի Վաղատուրի նախաձեռնող խմբի կողմից ներկայացված <<Սմարթ այգու հիմնում Վաղատուր բնակավայրում>> նախագիծը:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված ենթադրամաշնորհի համար սահմանել համայնքային ներդրում՝ 500 /հինգ հարյուր/ եվրոյին համարժեք ՀՀ դրամի չափով՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից տվյալ օրվա սահմանած փոխարժեքով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

(որոշման նախագծի քվեարկության արդյունքները. կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0)

Օրակարգի բոլոր հարցերն սպառվեցին: Նիստն ավարտվեց ժամը 15.20-ին:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ավագանու անդամներ՝

1 Արտակ Աղաջանյան
2 Սևադա Դանիելյան
3 Մասիս Մկրտչյան
4 Համեստ Հակոբյան
5 Արգամ Լալայան
6 Նարինե Ջհանգիրյան
7 Սենիկ Փարսյան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ ***Ներսես Շադունց***